ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» նոյեմբերի 2015թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքիքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

1) Փ.Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկի «Հրապարակ օրաթերթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված 90քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2017 թվականի դեկտեմբերի 1-ը տրամադրել ընկերությանը։

2) Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ.Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրված 33.5 քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 2017 թվականի դեկտեմբերի 1-ը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետին են դիմել «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը և «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ն՝ Երևանի Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկում ընկերությունների կողմից զբաղեցված համապատասխանաբար՝ 33.5քմ և 90քմ մակերեսով ոչ բնակելի տարածքների համար կնքված պայմանագրերի ժամկետները երկարացնելու և անհատույց օգտագործման իրավունքը ձևակերպելու խնդրանքով:

Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.11.2011թ. հ.2817291 վկայական):

Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 4–րդ հարկի 33.5քմ մակերեսով տարածքն «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է Երևանի քաղաքի ավագանու 24.05.2011թ. հ.232-Ա և 10.09.2013թ. հ.44-Ա որոշումների հիման վրա, սակայն կնքված օգտագործման պայմանագրի ժամկետն ավարտվել է 24.05.2015թ.: Նույն հարկի 90քմ մակերեսով տարածքն «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ին տրամադրվել է Երևանի քաղաքապետի 24.09.2010թ. հ.4409-Ա որոշման հիման վրա և կնքված օգտագործման պայմանագրի ժամկետն ավարտվել է 24.09.2015թ.:

Հարկ է նշել, որ Բուզանդի հ. 1/3 հասցեում գտնվող շենքում նույնատիպ տարածքներ են զբաղեցնում նաև այլ լրատվական և հասարակական բնագավառում գործունեություն ծավալող կազմակերպություններ, որոնց մասով անցած տարիների ընթացքում ավագանու կողմից ձևավորվել է մոտեցում և համանման դեպքերում այդ կազմակերպություններին տարածքները տրամադրվել են անհատույց օգտագործման իրավունքով:

Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող գործունեության կարևորությունը մեր հասարակության համար, կազմակերպությունների ունեցած հեղինակությունն ու բազմամյա աշխատանքային փորձը Հայաստանի լրատվական, հասարակական և քաղաքական բնագավառներում և նպատակ ունենալով աջակցելու և հնարավորություն տալու ունենալ աշխատանքի համար բավարար պայմաններ, նպատակահարմար է գտնվել մշակել որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ